*Երևանի պետական համալսարանի հարգարժան ռեկտոր Արամ Սիմոնյան, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, աշխատակիցներ, ուսանողներ*

Մեր ժողովուրդը, հիրավի, կրթության ու լույսի ջահակիր է: Կրթությանն ենք ապավինել ու նրանով ենք առաջնորդվում մեր բազմադարյա պատմության ու քերթության քառուղիներում:

Մեր հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ ընտանիքում կրթության ու լույսի ջահը պատվով կրողներից առաջատարը Երևանի պետական համալսարանն է, մեր Ալմա մատերը:

Սիրելի համալսարանականներ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորատի, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության ու անձամբ իմ անունից ընդունեք ջերմ շնորհավորանքներ 95-ամյա պանծալի հոբելյանի առիթով: Մեր համալսարանը այս գեղեցիկ տոնի մեջ տեսնում է նաև իր ուրախությունը, քանզի սերվել է կրթության մայր տաճարից, ինքնահաստատ կերպով կերտել իր ճանապարհը ու երբեք չի մոռացել իրեն ծնունդ տվող ու կայացումն ապահովող օջախին:

95-ամյակը տոնելով՝ մեր բոլորիս սիրելի համալսարանը շարունակում է լինել երիտասարդ, կենսասեր՝ իր հպարտ գոյությունը հաստատելով որպես մտքի ու հոգու կրթության աներեր դարբնոց:

Խորին հպարտությամբ ենք այսօր նշում, որ համալսարանն իր տարիների բարձունքին հասել է մեծամեծ ձեռքբերումներով, տասնամյակների երթում բազմապատկել իր ուժը, եռանդը, հզորությունը՝ անսալով ժամանակի ոգուն, պահանջին ու ամենահամարձակ

մարտահրավերներին: Հանրապետության խոշորագույն բուհն այսօր մասնագետներ է կրթում ու թողարկում բազմաթիվ ուղղություններով ու ոլորտներով, մայր բուհում կրթության որակը համադրելի է ամենաբարձր չափանիշներին:

Վստահաբար, մեր սիրելի համալսարանը այսուհետ ևս պիտի ծառայի մեր ժողովրդին ու մեր երկրին, քանզի միտված լինելով հայ մարդու մեջ կրթության հանդեպ սեր սերմանելու գործին՝ բացառիկ է նրա դերակատարությունը:

Թույլ տվեք կրկին շնորհավորել ձեզ, մաղթել գիտական, ուսումնական հաջողություններ և արգասաբեր գործունեություն:

*Հարգանքով՝*

***Կորյուն ԱԹՈՅԱՆ***

***Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի***

***ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր***

***11.06.2014 թ.***